ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 30.03.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 29/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 10.03.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-29/17 բողոք) և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը և ԳԲԽ-29/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.03.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 10.03.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ ՊՆ-ի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովը 2017թ. մարտի 6-ի թիվ 1 որոշմամբ հաստատել է ՀՀ ՊՆ-ի կարիքների համար «Ախտահանիչ և լաբորատոր նյութերի ձեռքբերման» նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով հրավերը:

Պատվիրատուն հրավերի ծածկագրում գնման առարկայի համարը նշել է ՀՀ ՖՆ 13/04/2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված գնումների ցանկի թիվ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9»-ը, որտեղ գնման առարկայի անվանումը նշված է «Քիմիական

նյութեր»:

Պատվիրատուն հրավերում գնման առարկայի անվանումը չի գրել գնումների ցանկով սահմանված անվանումով, այլ գրել է «Ախտահանիչ և լաբորատոր նյութեր» անվանումը՝ ներառելով գնման բնութագրեր, որով թույլ է տվել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման Հավելված 1-ի 80-րդ կետի խախտում, համաձայն որի «Հրավերը գնման բնութագրերը չի ներառում և գնման առարկան հրավերում նկարագրվում է՝ ըստ դրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում նշված սահմանման ...»:

Դիմելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին Ընկերությունը խնդրում է՝

1. դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավեր հայտարարելու մասին 2017թ. մարտի 6-ի թիվ 1 որոշումը,
2. կասեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով Ընթացակարգը, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը (այդ թվում նաև պայմանագրի կնքման գործընթացը):

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Կենտրոնը 13.03.2017թ.-ին Պատվիրատուին ուղղված գրությամբ խնդրել էր եռօրյա ժամկետում ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Պատվիրատուն 17.03.2017թ. թիվ ԴՎԱ/673 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարի 28.02.2017թ. թիվ 72-Ա հրամանով հաստատված գնումների գործընթացներում կիրառվող հրավերների օրինակելի ձևերում պահանջվում է որպես հրավերի վերնագիր նշել ընդամենը գնման առարկայի անվանում: Քանի որ վերը նշված ընթացակարգի գնման առարկան են հանդիսանում թվով 97 չափաբաժին ախտահանիչ և լաբորատոր նյութերը, որպես հրավերի վերնագիր նշվել է «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Ախտահանիչ և լաբորատոր նյութերի» ձեռքբերում»:

Հրավերը հրապարակվել է www.gnumner.am և Armeps համակարգի միջոցով ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. հ. 1170-Ն հրամանով հաստատված ցանկի 1.15՝ «Քիմիական նյութեր» անվանատողի մասով շրջանակային համաձայնագիր կնքած բոլոր մասնակիցներին, իսկ հրավերով «Մասնագիտական փորձառության» չափանիշի առկայությունը հավաստելու համար որպես նմանատիպ են սահմանվել նախկինում քիմիական նյութերի մատակարարման պայմանագրերը:

Պատվիրատուն նշել է նաև, որ Ընկերության կողմից իրականացվել է օրենսդրության պահանջի սխալ մեկնաբանություն, քանի որ 80-րդ կետով նախատեսված դրույթները վերաբերվում են «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից շրջանակային համաձայնագրեր կնքելու նպատակով կազմակերպվող ընթացակարգերի շրջանակներում հրապարակվող հրավերներին:

Ըստ Պատվիրատուի՝ գնահատող հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ, որևէ մասնակցի իրավունք չի խախտվել, շահ չի ոտնահարվել, իսկ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնազուրկ է:

3. ԳԲԽ-29/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 24.03.2017թ. եզրակացությունը և առաջարկել է «Խաչպար» ՍՊԸ-ի 10.03.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-29/17 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-29/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ՊՆ-ի կարիքների համար «Ախտահանիչ և լաբորատոր նյութեր»-ի ձեռք բերելու նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հրավերը:

2. ՀՀ ֆինանսների նախարարի 28.02.2017թ. թիվ 72-Ա հրամանով հաստատված գնումների գործընթացներում կիրառվող հրավերների օրինակելի ձևերում պահանջվում է որպես հրավերի վերնագիր նշել ընդամենը գնման առարկայի անվանում: Քանի որ վերը նշված ընթացակարգի գնման առարկան են հանդիսանում թվով 97 չափաբաժին ախտահանիչ և լաբորատոր նյութեր, իսկ որպես հրավերի վերնագիր նշվել է «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Ախտահանիչ և լաբորատոր նյութեր»-ի ձեռքբերում:

3. Հրավերը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում և Armeps համակարգի միջոցով ուղղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. հ. 1170-Ն հրամանով հաստատված ցանկի 1.15՝ «Քիմիական նյութեր» անվանատողի մասով շրջանակային համաձայնագիր կնքած բոլոր մասնակիցներին:

4. Հրավերով «Մասնագիտական փորձառության» չափանիշի առկայությունը հավաստելու համար որպես նմանատիպ են սահմանվել նախկինում ***քիմիական նյութերի մատակարարման պայմանագրերը:***

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 10.03.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ-ի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), գտնում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի 10.03.2017թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա, այն է՝ ***գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային***, թափանցիկ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով կազմակերպում***:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, որոնց համաձայն՝ չեն կարող սահմանվել ***մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի*** և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն նույն հոդվածով

2) ***խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին***:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. հ.168-Ն որոշման 80-րդ կետը՝ «Հրավերը գնման բնութագրեր չի ներառում, և գնման առարկան հրավերում նկարագրվում է ըստ դրա՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում նշված սահմանման»:

ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. հ. 1170-Ն հրամանով հաստատված ցանկի 1.15՝ «Քիմիական նյութեր» անվանատողի մասով շրջանակային համաձայնագիր կնքած բոլոր մասնակիցներին, իսկ հրավերով «Մասնագիտական փորձառության» չափանիշի առկայությունը հավաստելու համար որպես նմանատիպ են սահմանվել նախկինում քիմիական նյութերի մատակարարման պայմանագրերը:

ՀՀ ՊՆ-ի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովը 2017թ. մարտի 6-ի թիվ 1 որոշմամբ հաստատել է ՀՀ ՊՆ-ի կարիքների համար «Ախտահանիչ և լաբորատոր նյութերի ձեռքբերման» նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով հրավերը:

Հրավերը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում և Armeps համակարգի միջոցով ուղղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.2012թ. հ. 1170-Ն հրամանով հաստատված ցանկի 1.15՝ «Քիմիական նյութեր» անվանատողի մասով շրջանակային համաձայնագիր կնքած բոլոր մասնակիցներին, իսկ հրավերով «Մասնագիտական փորձառության» չափանիշի առկայությունը հավաստելու համար որպես նմանատիպ են սահմանվել նախկինում ***քիմիական նյութերի մատակարարման պայմանագրերը:***

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով, Խորհուրդը գտնում է, որ նման պայմաններում չի հիմնավորվում մասնակցի իրավունքների խախտում և միայն անվան հիմքով ընկած բացթողումը չի կարող հիմք հանդիսանալ ընթացակարգը չկայացած հայտարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և զեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու հրավեր հայտարարելու մասին 2017թ. մարտի 6-ի թիվ 1 որոշումը դադարեցնելու մասին պահանջով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 10.03.2017թ. ներկայացրաց բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամ՝ **Արամ Գրիգորյան**

Անդամ՝ **Մարիամ Սարգսյան**